

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը.

Քրիստինա Հակոբյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Մթնոլորտային քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Վրաստանի Հանրապետություն (Թբիլիսի), 2023 թ. նոյեմբերի 19-24-ը

4. Հրավիրող կողմը.

EU4Energy ծրագիր

5. Գործուղման նպատակը.

Մասնակցություն՝ «Կայուն տրանսպորտ» խորագրով էներգետիկ քաղաքական
ֆորումին:

6. Քննարկված թեմաները.

- տրանսպորտային միջոցների արդյունավետություն՝ համեմատական վերլուծություն, պիտակավորում և կանոնակարգեր,
- տրանսպորտային միջոցների էլեկտրաֆիկացում՝ տրանսպորտային միջոցների էլեկտրաֆիկացման խթանման գործիքներ,
- հարկաբյուջետային քաղաքականություն՝ տրանսպորտային միջոցների ներմուծման մաքսեր, վառելիքի հարկում, արտոնություններ,
- տրանսպորտի կայուն զարգացման քաղաքային քաղաքականության գործիքակազմ,
- բնական ռեսուրսների օգտագործումը ցածր արտանետումներով տրանսպորտային վառելիք արտադրելու համար,
- էլեկտրական և բարձր արդյունավետությամբ տրանսպորտային միջոցների ներդրման խթանում:

7. Հանդիպումները, ելույթները.

Քաղաքական ֆորումին մասնակցում էին 5 երկրների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ֆորումի հիմնական վարողն էր EU4Energy ծրագրի ղեկավար Տալա Վատմանը:

Ներկայացվեցին և քննարկվեցին հետևյալ շնորհանդեսները՝

✓ **Կայուն տրանսպորտի քաղաքականության գործիքակազմ**

- տրանսպորտում էներգիայի սպառումը և դրա ազդեցությունը գլոբալ մակարդակում և Արևելյան գործընկերության երկրներում,
- նորմատիվ ակտեր - վառելիքի տնտեսման ստանդարտներ՝ ելակետային պայմաններ, մոնիտորինգ և ստուգում,
- խթաններ - հարկաբյուջետային քաղաքականություն՝ տրանսպորտային միջոցների ներմուծման մաքս, վառելիքի հարկում, արտոնություններ:

✓ **Կայուն տրանսպորտի ազգային և մունիցիպալ քաղաքականության գործիքակազմ**

- քաղաքականության հիմնավորման համար տվյալներ և գնահատականներ՝ տրանսպորտի նկատմամբ պահանջարկի գործոններ,
- քաղաքային շարժունակության ծրագրեր Մոլդովայի Հանրապետությունում:

✓ **Բնական ռեսուրսների օգտագործումը ցածր արտանետումներով տրանսպորտային վառելիք արտադրելու համար**

- կենսավառելիք-հումք, վերամշակման գործընթացներ, արտանետումների ազդեցություն, տնտեսական հնարավորություններ և աշխատատեղեր,
- վերականգնվող վառելիքի խթանման քաղաքականություն,
- էլեկտրովառելիք՝ ցածր արտանետումներով էլեկտրաէներգիայի օգտագործման հնարավորություններ (օրինակ՝ հիդրոէլեկտրակայաններ, ատոմային, հողմային և արևային ֆոտովոլտային կայաններ), կենսածին ածխածնի աղբյուրների օգտագործումը,
- Արևելյան գործընկերության երկրների հեռանկարները՝ Ուկրաինա, Հայաստան, Վրաստան, Մոլդովա, Ադրբեջան:

✓ **Էլեկտրամոբիլներ՝ ներդրման կարգավիճակը, քաղաքականությունը և առավելությունները,**

✓ **Ռեսուրսներ և նախագծեր՝ Արևելյան գործընկերության երկրներում էլեկտրամոբիլների ներդրումն արագացնելու համար**

- էլեկտրոնային ավտոբուսների նախագծեր Արևելյան գործընկերության երկրներում (Բաթումի և Երևան), տրոլեյբուսներ (Մոլդովա և Ուկրաինա),
- տրանսպորտային միջոցների ծառայության ժամկետի ավարտը և կուտակիչ մարտկոցների ուտիլիզացիա,
- լիցքավորման ենթակառուցվածքի տեղակայման լավագույն փորձը՝ մասնավոր և պետական, հնարավոր կարգավորող խոչընդոտներ. լիցքավորման ենթակառուցվածքի մատակարարներ, բիզնեսի դեպքեր,

- լիցքավորման ենթակառուցվածքների տեղակայումը Հայաստանում,
- ինտելեկտուալ լիցքավորման կայանների առավելությունները ծախսերի և արտանետումների առումով, ինտեգրում տնային ինտելեկտուալ հաշվիչների հետ:
- ✓ **Միջազգային կայուն ֆինանսավորում ներգրավելու համար հնարավորությունների օգտագործում**

- GEF-7 նախագիծը Հայաստանում,
- տեխնիկական և ֆինանսական օգնության առաջարկներ:
Ֆորումի առաջին օրը նաև իրականացվել է այցելություն Թբիլիսիում գտնվող բիոդիզելային վառելիքի (արտադրված ռապսի սերմերի և օգտագործված բուսական յուղի օգտագործմամբ) գործարան:

8. Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը,

Քննարկում- հանդիպման ընթացքում կարևորվեց կայուն տրանսպորտի զարգացման խթանման համար ներդրումային (միջազգային կառույցներ, պետական, մասնավոր) գործընթացների մոբիլիզացումը: Ստորագրված փաստաթղթերը չկան:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանդիպումների ընթացքում հնարավորություն ընձեռնվեց քննարկել տրանսպորտային միջոցների էլեկտրաֆիկացման խթանման հնարավորությունները, ծանոթանալ լավագույն փորձին և առաջարկվող լուծումներին:

Գործուղվող՝

Ք. Հակոբյան

